Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 10 -ի N 955 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ ՎԱՐՈՂ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են բնակչության պետական ռեգիստր վարող լիազոր մարմնի կողմից հարկային մարմին անձնագրերի և նույնականացման քարտերի վերաբերյալ տեղեկությունների ներկայացման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրված անձնագրերի և նույնականացման քարտերի վերաբերյալ տեղեկությունները (այսուհետ՝ տեղեկություն) հարկային մարմինն ստանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինքնաշխատ տեղեկատվական բազայից:

3. Հարկային մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինքնաշխատ տեղեկատվական բազայից հարցումների միջոցով ստանում է հետևյալ տեղեկությունները՝

1) վավեր անձնագրեր և նույնականացման քարտեր ունեցող անձանց մասին հետևյալ տվյալները՝

ա. անձնագրի սերիան,

բ. անձնագրի (նույնականացման քարտի) համարը,

գ. անձնագիր (նույնականացման քարտ) տալու օրը, ամիսը, տարեթիվը,

դ. անձնագրի (նույնականացման քարտի) վավերականության ժամկետի ավարտի օրը, ամիսը, տարեթիվը,

ե. անձնագիրը (նույնականացման քարտը) տրամադրող մարմինը (ծածկագիրը),

զ. քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը,

է. քաղաքացու ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը,

ը. քաղաքացու սեռը,

թ. հաշվառման վայրը՝ մարզը, համայնքը, բնակավայրը, փողոցը, շենքը (տունը), բնակարանը,

ժ. հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը.

2) նոր անձնագրեր (նույնականացման քարտեր) ստացած անձանց մասին սույն կետի 1-ին ենթակետում նշված տվյալները.

3) անձնագրի (նույնականացման քարտի) կորստի կամ վավերականության ժամկետը լրանալու դեպքում անձնագիրը (նույնականացման քարտը) փոխանակելու կամ անձնագրային (նույնականացման քարտի) տվյալները փոփոխելու դեպքում ներկայացվում են անձի հին և նոր անձնագրի (նույնականացման քարտի)՝ սույն կետի 1-ին ենթակետում նշված տվյալները և հանրային ծառայության համարանիշը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը.

4) քաղաքացու մահվան դեպքում՝

ա. մինչև մահն ունեցած անձնագրի (նույնականացման քարտի), սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված տվյալները, ընդ որում, հաշվառման վայրի վերաբերյալ նշվում է մահացած անձի վերջին հաշվառման վայրը,

բ. մահվան օրը, ամիսը, տարեթիվը,

գ. հանրային ծառայության համարանիշը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը:

4. Սույն կարգին համապատասխան տեղեկատվության փոխանցման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների բազաներում մշակվող անձնական տվյալներն էլեկտրոնային եղանակով փոխանցելու կարգը հաստատելու մասին» N 192-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ